ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության
քննիչ՝ Գ. Աղաբաբյանին

Տուժողի իրավահաջորդ՝

Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ՝

1. Արթուր Ալբերտի Սաքունց
2.Արայիկ Միքայելի Զալյան

Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր Տիգրան Մեծի 59

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

(ՌԴ 102 ռազմաբազայի սպայական անձնակազմի, ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողների և ՀՀ ԱԱԾ համապատասխան աշխատակիցների դեմ քրեական գործ հարուցելու պահանջի մասին)

2015թ. հունվարի 13-ին ժամը 00:15-ի սահմաններում հայ-թուրքական պետական սահմանին Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ծառայողները ձերբակալել են պետական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարող անծանոթ անձի, որը հետագայում պարզվել է, Վալերի Պերմյակովն է:

Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի ներկայացուցիչները ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու ցանկացած դեպքում պարտավոր էին կատարել 1992թ. սեպտեմբերի 30-ի «ՀՀ տարածքում տեղակայված ռուսաստանյան սահմանապահ զորքերի կարգավիճակի և դրանց գործունեության պայմանների մասին» պայմանգրի 5-րդ հոդվածով նախատեսված գործողությունները, որը <u>բացառում է</u> ՌԴ սահմանապահ զորքերի ներկայացուցիչների կողմից ինքնուրյուն հետաքննչական գործողություններ իրականացնել և սահմանում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության և իրավապահ մարմինների հետ համատեղ օպերատիվ հետախուզական աշխատանք, պետական սահմանը խախտելու վերաբերյալ համատեղ հետաքննություն և համատեղ անհետաձգելի գործողություններ՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի:

2015թ. հունվարի 13-ին ժամը 00:15-ի սահմաններում ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողների կողմից ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու փորձ կատարող անծանոթ անձի վերաբերյալ տեղեկատվություն չեն փոխանցել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ իրավապահ մարմիններին, իսկ <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ իրավապահ մարմիններն էլ, իրենց հերթին, տեղեկություն չեն պահանջել</u>: Հետագայում նույնպես, երբ արդեն պարզ է դարձել, որ տվյալ անձը հանդիսանում է հետախուզման մեջ գտնվող ՌԴ 102-րդ ռազմաբազայի զինծառայող Վ. Պերմյակովը, ով կասկածվում էր Գյումրիի Մյասնիկյան 188 տանը տեղի ունեցած սպանությունների կատարման մեջ, ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողների կողմից տեղեկություն չի տրամադրվել ՀՀ իրավապահ մարմիններին:

ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողները ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարած հետախուզման մեջ գտնվող և սպանությունների կատարման մեջ կասկածվող Վ. Պերմյակովին ապօրինի ձերբակալել և հանձնել են ՌԴ 102-րդ ռազմաբազայի ներկայացուցիչներին:

ՌԴ սահմանապահ զորքերի և 102-րդ ռազմաբազայի ներկայացուցիչների կողմից թույլ տրված ապօրինությունը՝ Վ. Պերմյակովին առանց ՀՀ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից ձերբակալելը և առևանգման միջոցով տեղափոխելը ՀՀ իրավապահ մարմինների կողմից չի կանխվել (չնայած նրան, որ պաշտոնապես հայտարարվել էր, որ ՀՀ իրավապահ մարմինների կողմից ճանապարհները վերահսկվում են և բոլոր գործողությունները կատարվում են համատեղ):

Սույն գործողություններն իրենց մեջ պարունակում են մի շարք հանցակազմեր՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի՝ արդարադատության և պետական ծառայության դեմ ուղղված:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ <u>ՀՀ տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթն իրականացվում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:</u>

ՀՀ-ում տեղակայված ՌԴ ռազմակայանի տարածքը ՀՀ տարածքն է, որը ընդամենը վարձակալության է հանձնված ՌԴ-ին: Հետևաբար, տվյալ ռազմակայանների տարածքում կիրառելի է Հայաստանի Սահմանադրությունը և ՀՀ օրենքները: Բացի այդ, դա նաև նշանակում է, որ այդ տարածքում չի կարող գործել որևէ այլ պետության սահմանադրություն կամ օրենքներ:

Ռուսական կողմը, ինչպես ասվեց, հրաժարվում է հայկական կողմին հանձնել Պերմյակովին: Սակայն, ինչպես նկատեցինք, Վալերի Պերմյակովը Հայաստանում է, և խոսել նրա հանձնման (կամ արտահանձնման) մասին՝ անհեթեթ է, քանի որ Ռուսաստանը կարող է հանձնել կամ չհանձնել միայն մեկին, ով գտնվում է Ռուսաստանի տարածքում:

1997 թ. «ՀՀ եւ ՌԴ միջեւ ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ» համաձայնագրի՝ 4-րդ հոդվածում հստակ ամրագրված է, որ ՌԴ զորամասերից դուրս հանցանք կատարած ՌԴ զինվորականների գործերը պետք է քննի հայկական կողմը:

ՌԴ զորքերը ՀՀ տեղակայված են դեռևս 1992 թվականին ստորագրված «ՀՀ տարածքում գտնվող ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց գործունեության պայմանների մասին» հայ-ռուսական համաձայնագրով: Այդ համաձայնագրի համաձայն, ՌԴ սահմանապահները որևէ լիազորություն չունեն անձանց ձերբակալելու: Նրանք միայն իրավունք ունեն բռնելու այն անձանց, ովքեր ապօրինաբար հատել են կամ փորձել են հատել հայ-թուրքական կամ հայ-իրանական սահմանը, ապա անմիջապես կանչել <u>ՀՀ ազգային անվտանգության մարմիններին և իրավախախտին փոխանցել վերջիններիս:</u>

Այսինքն, ըստ վկայակոչված համաձայնագրի՝ Պերմյակովին բռնելուն պես ՌԴ սահմանապահ զորքերի ներկայացուցիչները պարտավոր էին այդ մասին հայտնել ՀՀ ԱԱԾ, (ինչն արել են բոլոր այլ ապօրինի սահմանահատների հետ[1]): Սակայն ՌԴ սահմանապահ զորքեի ծառայողները խախտել է պայմանագիրը և Պերմյակովին, ըստ էության, փախցրել են: Ուստի, եթե անգամ հաշվի չառնենք 1997թ. պայմանագիրը, ապա առնվազն որպես անիրավաչափ գործողության հետևանքի վերացում, 1992 թվականի պայմանագրի համաձայն, ՌԴ իրավապահները Պերմյակովին պետք է վերադարձնեն ՀՀ իրավապահներին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենսգրքի և քրեական դատավարության նորմեր պարունակող այլ օրենքների գործողությունը չի տարածվում ՀՀ միջազգային պայմանագրերով դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերին կամ սույն օրենսգրքի 445-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ տարածքում քրեական ընդդատությունից ազատված այլ անձանց վրա, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Իսկ մեր ունեցած տեղեկությունների համաձայն Վ. Պերմյակովը ինչպես նաև ՌԴ սահմանապահ զորքերի և 102 ռազմաբազայի զինվորական ծառայողները չեն հանդիսանում դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող անձիք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ գլխի տրամաբանությունից ելնելով, հանձնումը վերաբերում է «ՀՀ տարածքում հանցանք կատարած և օտարերկրյա պետության տարածքում գտնվող անձանց»: Իսկ փոխանցումը ընդամենը ենթադրում է, որ Հայաստանում գործող ՌԴ իրավապահները ՀՀ իրավապահներին են փոխանցում մեղադրյալին՝ մնալով նույն պետության սահմաններում:

Սույն պարագայում 1997թ. «ՀՀ և ՌԴ միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ» համաձայնագրի 4-րդ հոդվածում սահմանված՝ «զորամասերից դուրս հանցանք կատարած ՌԴ զինվորականների գործերը պետք է քննի հայկական կողմը» վերտառումը հիմք է տալիս պնդելու, որ Վ. Պերմյակովի թիվ 102 ռազմաբազայում գտնվելը չի բխում ՀՀ օրենսդրությունից և ՀՀ և ՌԴ միջև կնքված համաձայնագրերից:

Ելնելով վերոգրյալից դիմում ենք Ձեզ, ներկայացված անօրինականությունների վերաբերյալ կայացնել որոշում քրեական գործ հարուցել ՌԴ 102 ռազմաբազայի սպայական անձնակազմի, ՌԴ սահմանապահ զորքերի ծառայողների և ՀՀ ԱԱԾ համապատասխան ծառայակիցների դեմ:

---

1. (http://fnews.am/?p=2505663&l=am/hay-iranakan+sahmanin+zinvorakan+e+dzerbakalvel , http://armtimes.com/hy/read/56784, http://www.aravot.am/2015/03/01/547074/) վկայակոչված հղումների նյութերը ներկայացվում են կից:

Կից ներկայացնում ենք՝ www.fnews.am, www.armtimes.com և www.aravot.am լրատվական միջոցներով տարածված այն նյութերը, որոնց փոխանցմամբ սահմանախախտները փոխանցվել են ՀՀ ԱԱԾ-ին:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ՝ Ա. Սաքունց

Ա. Զալյան

03.06.2015թ.

27 Ապրիլ, 2015

Հայ-իրանական սահմանին զինվորական է ձերբակալվել

Нравится 7 0 Tweet 0

Անցած հանգստյան օրերին Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչության աշխատակիցները հայ-իրանական սահմանին ոչ սովարական սահմանախախտի են ձերբակալել:

Ինչպես հաղորդում է ՀՀ-ում Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչության մամուլի ծառայությունը, ապրիլի 25-ին առավոտյան ժամը 10-ի սահմաններում, տեղի բնակիչներից տեղեկատվություն է ստացվել, որ անհայտ անձը փորձում է Իրանի կողմից անցնել Արաքս գետը:

Մի քանի րոպե անց սահմանապահների «ահազանգի խումբը» հայտնաբերել ու ձերբակալել է սահմանախախտին:

Ձերբակալվածը հայտարարել է, որ ինքը Իրանի քաղաքացի 23-ամյա Ս.-ն է, զինվորական: Նա նշել է, որ ապօրինի պետական սահմանը հատելու պատճառը ծառայակցի հետ կրոնական հողի վրա ի հայտ եկած տարաձայնություններն են եղել: Ձերբակալվածն ասել է, որ ինքը քրիստոնեություն է դավանում:

Ներկայումս սահմանախախտը փոխանցվել է Հայաստանի ԱԱԾ-ին՝ պարզելու տեղի ունեցածի հանգամանքները:

Սահմանախախտման դեպքի մասին հայտնած տեղի բնակիչը կպարգեւատրվի Հայաստանում ՌԴ ԱԴԾ սահմանապահ վարչության ղեկավարության կողմից:

Դիտվել է **554** անգամ

Լրահոս Ամենաընթերցվածները

2 Հունիս, 2015
ՀՀ 3 քաղաքացի մեղադրվում է Դուբայում հնդիկ գո...
(/?p=2507604&l=am/hh+3+qaxaqac i+adamand+hapshtakelu+mej)

2 Հունիս, 2015
Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը կմ...
(/?p=2507603&l=am/seyran+ohanya

2 Հունիս, 2015
Քահանան խիստ վիրավորված է Հովիկ Աբրահամյանից....
(/?p=2507602&l=am/qahanan+xist+

2 Հունիս, 2015
Թունավորման ախտանիշներով քաղաքացիներ են հոսպի...
(/?p=2507601&l=am/tunavorman+a

2 Հունիս, 2015
Ադրբեջանը առաջիկա 5 տարում Թուրքիայի

Ամբողջ լրահոսը (/?news_line&l=am)

Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոն

www.aawc.am

Մամուլի տեսություն (/?cat=2&l=am)

Քահանան խիստ վիրավորված է Հովիկ

2 Հունիս, 2015

armtimes.com

(/hy)

27 հունվարի, 2014 | 19:16

12:05

24°

Share on Facebook (https://www.facebook.com/sharer/sharer.php?u=http://armtimes.com/hy/read/5678
Share on Google+ (https://plus.google.com/share?url=http://armtimes.com/hy/read/56784)
Tweet (http://www.twitter.com/intent/tweet?url=http://armtimes.com/hy/read/56784)

Հայ-թուրքական սահմանը ապօրինի հատելու փորձ կատարողը ձերբակալվել է



Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչությունից այսօր տեղեկատվություն են տարածել, որ հայ-թուրքական սահմանին ձերբակալվել է Իրանի քաղաքացի, որը մտադրվել էր ապօրինի հատել պետական սահմանը:

Ռուսաստանի ԱԴԾ-ի փոխանցմամբ սահմանախախտին հայտնաբերելու գործում օգնել են Ծիրակի մարզի Գտաշեն գյուղի բնակիչները: Բանն այն է, որ նոյեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը Ծիրակի մարզի Գտաշեն գյուղի բնակիչ Արմեն Է.-ն անհայտ անձի է հայտնաբերել, որը հետաքրքրվում էր՝ ինչպես անցնել հայ-թուրքական սահմանի կողմ: Արմենը այդ մասին հաղորդել է սահմանապահ ջոկատին եւ միայնակ փորձել ձերբակալել իրավախախտին: Անհայտ անձը փորձել է փախչել դեպի պետական սահման: Գյումրիի սահմանապահ ջոկատի զինծառայողները մի քանի րոպեից փակել են պետական սահմանի այդ հատվածը: Արմենը օգնության է կանչել համագյուղացիներին եւ ազդանշանային համալիրից 200 մետր հեռավորության վրա անծանոթին ձերբակալել են:

Ստուգումների ընթացքում պարզվել է, որ ձերբակալվածը ԻԻՀ-ի քաղաքացի է՝ 1976 թվականին ծնված: Ձերբակալվածը բացատրել է, որ մտադրվել էր ապօրինի հատել սահմանը եւ Թուրքիա մեկնել: Իր արարքի դրդապատճառը պարզաբանել է անձնական խնդիրներով:

Նոյեմբերի 25-ին ձերբակալվածը հանձնվել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցներին, որոնք կպարզեն կատարվածի բոլոր հանգամանքները:

Իրավունք (/hy/4) Հայ-թուրքական սահման ...

Tweet 0
Share 0
0 Comments
Login to Facebook to Post a Comment

¤ì ‡ ¬ ¼Æ

Հայտնի է հոսանքի թանկացման հարցով Աժ լսումների օրը. դրանց կմասնակցի նաեւ Բիբինը (/hy/read/64861)
2 Հունիս, 2015



Ռուսաստանից եկած տրանսֆերտների ծավալը կրճատվել է կիսով չափ (/hy/read/64860)
2 Հունիս, 2015

Արավոտ (http://www.aravot.am)

22:45 | Մարտ 1 2015

Ռուս սահմանապահները մարտի 1-ին ձերբակալել են հայ-թուրքական սահմանը ապօրինի հատած սահմանախախտի. Azatutyun.am (http://www.aravot.am/2015/03/01/547074/)



«Ազատություն». (http://www.azatutyun.am/archive/news/20150301/2031/2031.html?id=26875977) «Մարտի 1-ին Գյումրիի սահմանապահ ուղեկալներից մեկում ազդանշան է ստացվել սահմանի պահպանության տեխնիկական միջոցներից: Հայտնաբերվել են հետքեր, որոնք տանում էին դեպի Հայաստանի տարածք, – «Ինտերֆաքսին» փոխանցել են Ռուսաստանի սահմանապահ ծառայությունից, – Սահմանապահ ջոկատի կողմից որոնողական աշխատանքներ են կազմակերպվել, սահմանախախտը մի քանի ժամ անց հայտնաբերվել է: Նրան խուզարկելիս հայտնաբերվել է Չեխիայի Հանրապետություն վերադառնալու թույլտվություն: Ձերբակալվածը հանձնվել է Հայաստանի ազգային անվտանգության ծառայությանը՝ հետագա քննության նպատակով»:

Հրապարակումն ամբողջությամբ՝ սկզբնաղբյուր կայքում:

Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքի՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Կայքում լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, նաեւ պարտադիր է կայքի ակտիվ հղումի տեղադրումը: